Արձանագրություն N 3

ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ գնանշման հարցմամբ դեղերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/33» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«18» «Հուլիսի» 2018թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Մ.Հարությունյան Ն.Թովմասյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Մնացականյան

1. Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Մ.Մխիթարյան)

Առաջնորդվելով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հարցման պատասխանները ստացվել են 12.07.18թ. և 17.07.18թ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել «Նատալի ֆարմ», «Ֆարմ Թրաստ», «Ռիխտեր Լամբրոն» ՍՊԸ-ներին և «Արֆարմացիա» ՓԲԸ-ին ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը:

Կազմակերպությունների կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և բնութագրերը ներկայացվել են մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող

փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունները.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/33» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթողներ ճանաչել՝

✓ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին՝ 1-ին և 5-րդ չափաբաժինների մասով՝ 7.417.200 դրամ պայմանագրային գումարով:

✓ «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ին՝ 8-րդ չափաբաժնի մասով՝ 3.759.000 դրամ պայմանագրային գումարով:

✓ «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին՝ 7-րդ չափաբաժնի մասով՝ 17.815.000 դրամ պայմանագրային գումարով:

✓ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով՝ 18.450.000 պայմանագրային գումարով:

2. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/33» ծածկագրով գնման ընթացակարգի **3,4,6** չափաբաժինները հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/33» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2018 թվականի հուլիսի 19-ից մինչև 2018 թվականի հուլիսի 23-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Մ. Մխիթարյան

Անդամներ՝ _____ Մ. Հարությունյան

_____ Ն. Թովմասյան

Քարտուղար՝ _____ Հ. Մնացականյան